ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՎԱՐԴԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, գյուղ Վարդաշեն էլ.փոստ vardashen@schools.am

«06» « 10» 2021թ.

N 91

ՀՀ Արարատի մարզպետ

պարոն Ռ. Թևոնյան

Հարգելի՛ պարոն մարզպետ,

«ՀՀ Արարատի մարզի Վարդաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2021-2022 ուստարվա մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով և հաստատության տարիֆիկացիոն ցուցակով առաջացել է «Կերպարվեստ» և «Տեխնոլոգիա» առարկաների ուսուցչի թափուր տեղ, որը համալրելու նպատակով դպրոցը սահմանված կարգով «Կրթություն» շաբաթաթերթում հրապարակելու է ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի հայտարարություն:

Մրցույթը կայանալու է Վարդաշենի միջնակարգ դպրոցում՝ 2021 թվականի նոյեմբերի 3-ին, ժամը 14:00-ին:

Առդիր՝ 1 էջ

Տնօրենի ժ/պ՝ /Ս.Ստեփանյան/

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Վարդաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Կերպարվեստ>> (5 դասաժամ), <<Տեխնոլոգիա>> (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 3-ին, ժամը 14:00-ին, Արարատի մարզի Վարդաշենի միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ գ.Վարդաշեն, Միեր Մկրտչյան 11:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)181086 հեռախոսահամարով: